Կարծիք

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելում մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

19.05.2022թ. ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված էր կառավարության կողմից ներկայացված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելում մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.

Նախագծով առաջարկվող որոշ կարգավորումներ հիմնավորված չեն, հակասում են ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի իրացման օպերատիվության սկզբունքին և պարունակում են հակասություններ օրենքում ամրագրված այլ դրույթների տրամաբանության հետ: Մասնավորապես՝

1. Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է ապօրինի գույքի բռնագանձման վարույթների ժամկետների տևողությունը երկարացնել մեկ տարով՝ ամրագրելով 3 տարի 2-ի փոխարեն: Նշված առաջարկն էլ ավելի է խորացնում վարույթների ժամկետների վերաբերյալ մայր օրենքի նախագծի քննարկումների ժամանակ արտահայտած մտահոգությունները: Ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի իրացման արդյունավետության կարևորագույն նախապայման է հանդիսանում օպերատիվության սկզբունքը՝ այդ գույքի արտահոսքի հնարավոր կանխման, գործընթացում տնտեսական անկայունությունները բացառելու նպատակով: Նախագծի հիմնավորման մեջ որպես ժամկետի երկարացման պատճառ նշվում է փորձագետների ծանրաբեռնվածությունը և այլ երկրներին հասցեագրված հարցումները, որոնց պատասխանների ստացման ժամկետների առումով ՀՀ իրավապահ մարմինները չունեն իրավակարգավորիչ լծակներ: Հարկ է նշել, որ փորձաքննությունների կատարման ժամկետների, որակի հետ կապված հիմնախնդիրը երկար ժամանակ մնում է չլուծված ՀՀ իրավական համակարգի բարեփոխումներում: Վերջին տարիներին ևս որևէ առարկայական և բովանդակալի քայլեր չեն ձեռնարկվել փորձաքննության ինստիտուտի վիճակի բարելավման համար:

Ուսումնասիրության ժամկետի երկարացումն անհիմն է նաև այն պատճառով, որ ինքնին վարույթ հարուցելու պայմանը կապելով քրեական գործերով անձի կարգավիճակի, ինչպես նաև քրեական դատավարության փուլերի հետ, արդեն իսկ նախապայման է ձևավորվել ապօրինի գույքի բռնագանձման վարույթների ժամկետների ձգձգման համար՝ քրեական գործով ապացույցների լրացման, կայացվող որոշումների բնույթով պայմանավորված, ինչպես օրինակ՝ արդարացնող հիմքով վարույթի կարճումը:

Արտաքին հարցումների պատասխանների ժամկետների մասով հարկ է նշել, որ պետությունների փոխադարձ իրավական օգնության ապահովումը կարգավորող պայմանագրերում ամրագրվում են նաև ժամկետներ՝ հարցումների պատասխանների համար: Նախագծի հիմնավորման մեջ առկա չեն նույնիսկ որևէ թվային տվյալներ նման հարցումների կապակցությամբ, ինչից ելնելով կարելի էր արձանագրել ներկայացված նախագծի առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը:

Առաջարկ.

Ելնելով ներկայացված առաջարկի հիմնավորումների ձևական, չփաստարկված լինելու հանգամանքից՝ վարույթի իրականացման առավելագույն ժամկետը թողնել 2 տարի: Միաժամանակ, նախագծի պառլամենտական քննարկումների ընթացքում

ներկայացված առաջարկության իրական նպատակները բացահայտելու նպատակով ցանկալի է ներկայացնել թվային տվյալներ՝ ինչպես արտաքին հարցումների քանակի և ենթադրյալ ստացված պատասխանների միջինացված ժամկետների, այնպես էլ փորձաքննությունների իրականացման ընթացքի, դրանց ժամկետների ձգձգման պատճառով վարույթների ձախողումների առկայության կամ բացակայության վերաբերյալ:

2. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է լրացնել ապօրինի գույքի բռնագանձման վարույթի հիմքերը՝ դատախազությանը հնարավորություն տալով ուսումնասիրություն սկսել նաև այն դեպքում, երբ իր վարույթում գտնվող նյութերով պարզվում **է այլ անձի պատկանող ապօրինի գույքի առկայության մասին:** Մայր օրենքն, ամրագրելով ուսումնասիրություն սկսելու համար անհրաժեշտ հիմքերը, դրանք կամ կապել է քրեական գործի վարույթի և դրա շրջանակներում տարբեր հանգամանքների հետ կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկատվության հետ՝ փաստացի ամրագրելով քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների անհերքելիության կանխավարկածը: Նախագծով ներկայացված հիմքը իրավական տեսանկյունից վիճարկելի է հետևյալ պատճառաբանությամբ: Դատախազությունը վարույթի շրջանակներում ուսումնասիրում է ոչ միայն շահագրգիռ անձի, այլ նաև վերջինիս հետ փոխկապակցված անձի գույքը: Իրավական որոշակիության առումով անհասկանալի է՝ առաջարկվող փոփոխությամբ այլ անձը շահագրգիռ անձի հետ փոխկապակցված անձն է, թե՝ նրա հետ որևէ առնչություն չունեցող անձ, որի գույքի վերաբերյալ կարող է սկսվել բռնագանձման վարույթ: Կարգավորումը խնդրահարույց է նաև այն պատճառով, որ դատախազության սահմանադրական լիազորություններն ըստ էության թույլ չեն տալիս բացի պետական շահերի պաշտպանության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ իրականացնելուց, այլ ոլորտում դրսևորել հայցի հարուցման նախաձեռնողական գործողություններ, առավել ևս՝ իրացնել դրանք: Ընդհանուր առմամբ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասով դատախազության լիազորություններով պայմանավորված միջամտության անթույլատրելիության հետ կապված մեր առաջարկները ներկայացվել են մայր օրենքի նախագծի քննարկման փուլում:

Առաջարկ.

Հստակեցնել դատախազության կողմից իրականացվող վարույթներով հայտնաբերվող այլ ապօրինի գույքի շահագրգիռ անձի կարգավիճակը՝ վերջինս սկզբնական վարույթով ապօրինի գույքի շահագրգիռ անձի հետ փոխկապակցված անձն է, թե ընդհանրապես այլ անձ: Հակառակ պարագայում նույնիսկ դատախազության ներկա լիազորությունների շրջանակներում ուսումնասիրությունները որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել: